«ՋԱՎԱԽՔԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2014-2018

«Ջավախքին աջակցություն» հիմնադրամը (ՋԱՀ) անդամություն չունեցող, ապաքաղաքական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2013թ. դեկտեմբերի 10-ին:

ՋԱՀ-ի տեսլականն է՝
Կյանքի բարձր որակ ունեցող, ազգային ինքնության հաստատուն հիմքերով, համախմբված Ջավախք:
ՋԱՀ-ի առաքելությունն է՝
Նպաստել Վրաստանի Սամցխե-Ջավախք և Քվեմո Քարթլի նահանգների հայության հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացմանը և հայ-վրացական համագործակցությանը:

«ՋԱՎԱԽՔԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՋԱՀ)

ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհուրդ՝

Սոս Սահակյան
«Սովռանո» խմբի հիմնադիր և նախագահ տ.գ.թ., ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ

Սերգեյ Վանցյան
Ավիատոր, «Հայք Ավիա» ավիաընկերության նախագահ

Աշոտ Մելքոնյան
Ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն

Արմեն Մկոյան
«Էլիտ Գրուպ» ընկերության նախագահ

Հովհաննես Մութաֆյան
ՀՀ վաստակավոր ճարտարապետ, «ԱՇՆ ՓՐՈՋԵՔՏ» ընկերության գլխավոր ճարտարապետ

Համլետ Շահբեկյան
«Պարկետ ավենյու» ընկերության հիմնադիր տնօրեն

Կարինե Խոդիկյան
Դրամատուրգ, արձակագիր, հրապարակախոս, «Գրական թերթի» գլխավոր խմբագիր



Հովհաննես Հովհաննիսյան
Երևանի շոկոլադի գործարանի խորհրդի նախագահի գլխավոր խորհրդական

Արման Սահակյան
Բարեգործ, գործարար

Գարեգին Խումարյան
ՀՀ հանրային
ռադիոյի տնօրեն

Վաղարշակ Մեյրոյան
Հայաստանում
ֆրանսիական
համալսարանի
վարչաֆինանսական
տնօրեն

Պարույր Պալյան
«Սոսի 97»
ընկերության
հիմնադիր տնօրեն



Գագիկ Վարդերեսյան
ՀԱՊՀ դասախոս

Քաջավան Նուրիջանյան
ՀՀ ԱԻ նախարարի
խորհրդական



Հայր Գէորգ վարդապետ Սարգսեան
Մխիթարյան միաբան

ՋԱՀ-ի ներկայացուցչություններ

Գրիգոր Տաշչյան
ՌԴ, Պերմի
ներկայացուցիչ



Աղասի Սահակյան
ՌԴ, Սանկտ Պետերբուրգի
ներկայացուցիչ

Արմեն Ղարսլյան
Բարերար,
ՋԱՀ-ի ներկայացուցիչ

Գագիկ Պետրոսյան
ԱՄՆ, Լոս Անջելես
ներկայացուցիչ

Գործադիր վարչություն՝

Սամվել Մկոյան
Գործադիր տնօրեն

Ռուզաննա Երեմյան
Ախալքալաքի
գրասենյակի հաշվապահ

Հասմիկ Սաղաթելյան
Ջիվանու
տուն-թանգարանի
գիդ-համակարգող



Վեներա Ստեփանյան
Ծրագրերի ղեկավար



Մանուշակ Յորդանյան
Ախալքալաքի
գրասենյակի մաքրուհի

Հակոբ Քերոբյան
Ջիվանու
տուն-թանգարանի
գիտաշխատող



Էլիզա Գևորգյան
Հանրային և
արտաքին կապերի
պատասխանատու

Նապոլեոն Մարիկյան
Արմաթ-Հեշտիայի
խմբակավար

Ռաֆիկ Մշեցյան
Ջիվանու
տուն-թանգարանի
տնտեսվար

Արմեն Գրիգորյան
Վրաստանի
մասնաճյուղի տնօրեն



Մարգարիտա Ջավարջյան
Արմաթ-Ախալքալաքի
խմբակավար

Վարսենիկ Մշեցյան
Ջիվանու
տուն-թանգարանի
մաքրուհի

Գուրգեն Եզոյան
Ախալքալաքի
գրասենյակի իրավաբան,
խորհրդատու



Լալա Կերեկցյան
Արմաթ-Դամալայի
խմբակավար

Ռազմավարական և մարտավարական ուղղություններ

ՋԱՀ-ը 2014-2018թթ. գործընկերների հետ համատեղ իրականացրել է Ջավախքի հասարակական կյանքի տարբեր ոլորտների զարգացմանն ուղղված շուրջ 100 ծրագիր:

Մշակութային կյանքի աշխուժացում

Ջավախքում մշակութային կյանքի ակտիվացումը «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի գործունեության առանցքային տարրերից է: Հասարակության կայուն զարգացումն ու ազգային ինքնության ամուր հիմքերն անհնար է պատկերացնել առանց հարուստ ավանդույթների, մշակութային ժառանգության պահպանման, տարածման և զարգացման:

Հաշվետու ժամանակահատվածում ՋԱՀ-ը գործընկերների հետ համատեղ իրականացրել և/կամ աջակցել է շուրջ **40** *մշակութային ծրագրի թե՛ Ջավախքում և թե՛ Հայաստանում:*

Ծրագրի անվանումը՝ **Հուշակոթողների բացում**
Ժամանակահատվածը՝ 2014-2015թթ.
Վայրը՝ ք. Նինոծմինդա, գ.Դամալա, գ. Խանդո,
գ. Էխտիլա և Մառնեուլիի գ.Կարմիր

Հակիրճ նկարագիր՝
Տեղի են ունեցել Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշաքարերի տեղադրման և բացման արարողություններ, որոնց հիմնադրամը ցուցաբերել է կազմակերպչական և տարաբնույթ այլ աջակցություն: Հուշաքարի բացմանը մասնակցել են հասարակական, մշակութային գործիչներ, պաշտոնատար անձինք, գործարարներ և այլ հյուրեր ՀՀ-ից, Ռուսաստանից և Վրաստանից:

Ծրագրի արդյունքներ՝

- **5** տարածաշրջաններում վերոհիշյալ բազմաթիվ պատվիրակությունների անդամների այցելություններ, ազգաբնակչության մոտ մշակութային կյանքի ակտիվացում և ազգային արժեհամակարգի վերաիմաստավորում,
- Միջոցառումների կարևորում և լուսաբանում շուրջ **10** հանրային լրատվամիջոցներով և տեղեկատվական կայքերի միջոցով Հայաստանում և արտերկրում:

Ծրագրի անվանումը՝ **Ջավախահայ նկարիչների աշխատանքների ցուցահանդես**
Ժամանակահատվածը՝ 2014թ. ապրիլ
Վայրը՝ ՀՀ, Երևան

Հակիրճ նկարագիր՝ Երևանի Պատմության թանգարանում ՀՀ սփյուռքի նախարարության և «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի նախաձեռնությամբ կայացավ ջավախահայ նկարիչների աշխատանքների ցուցահանդեսի բացման արարողությունը, որին ներկա էին մշակութային գործիչներ, պետական, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ, հյուրեր:

Ծրագրի արդյունքներ՝

- Ջավախահայ շուրջ **5** նկարիչ-ստեղծագործողներ հնարավորություն ստացան ՀՀ-ում ներկայացնել իրենց **40** աշխատանքները, ստացան պատվոգրեր, շնորհակալագրեր և մեդալներ,
- Երևանի բնակչությունը շուրջ **10** օր ծանոթացավ ջավախահայ արվեստագետների աշխատանքներին:

Ծրագրի անվանումը՝ **«Հայ անպարագիծ ոգին... Ջավախքից Արցախ»**
Ժամանակահատվածը՝ 2014թ. մայիս **Վայրը՝** ՀՀ, Երևան

Հակիրճ նկարագիր՝
Մայիսյան հաղթանակներին ընդառաջ Երևանի թիվ 181 դպրոցում ՋԱՀ-ի աջակցությամբ տեղի է ունեցել «Հայ անպարագիծ ոգին... Ջավախքից Արցախ» խորագրով ներկայացում-միջոցառում՝ նվիրված Արցախյան ազատամարտի մասնակից, գլխավոր շտաբի նախկին պետ ՋԱՀ-ի համահիմնադիր, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանին:

Ծրագրի արդյունքներ՝
- Դպրոցի շուրջ **150** աշակերտ, աշխատակիցներ, ծնողներ ու հյուրերը ծանոթացան արցախյան ազատամարտին ջավախքահայության բերած նյութական և մարդկային աջակցությանը:

Ծրագրի անվանումը ՝ **Գուրգեն Դալիբալթայանի 88-ամյակին նվիրված երեկո**
Ժամանակահատվածը՝ 2014թ. հունիս **Վայրը՝** Երևան, ՀՀ

Հակիրճ նկարագիր՝
Հիմնադրամը ՀՀ պաշտպանության նախարարության աջակցությամբ կազմակերպեց ՋԱՀ-ի համահիմնադիր, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի ծննդյան 88-ամյակին նվիրված երեկո:

Ծրագրի արդյունքներ՝
- Երեկույթի ընթացքում շուրջ **150** մասնակիցների ներկայացվեցին Ջավախքի արժանավոր զավակ, մեծ հայորդի, գեներալ-գնդապետ Գուրգեն Դալիբալթայանի կենսագրությունը, մարդկային տեսակը և նրա դերը Արցախյան հերոսամարտում:

Ծրագրի անվանումը՝ «ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐ» տոնահանդես
Ժամանակահատվածը՝ 2014-2018թթ.
Վայրը՝ Ջավախք, Նինոծմինդայի շրջան, գ. Գանձա

Հակիրճ նկարագիր՝
Հիմնադրամի աջակցությամբ յուրաքանչյուր տարի Նինոծմինդայի Գանձա գյուղում Նինոծմինդայի քաղաքապետարանի կողմից կազմակերպվում է «ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՕՐ» ավանդական տոնահանդեսը, որին մասնակցում են հարյուրավոր հյուրեր Հայաստանից, Ռուսաստանից և Վրաստանից:

Ծրագրի արդյունքներ՝
- Բազմաթիվ հայրենակիցներ հնարավորություն ունեցան Տերյանի ծննդավայրում նորովի վերապրելու այն միջավայրը, որը ծնունդ է տվել մեծն պոետին:

Ծրագիր անվանումը՝ «Վերադարձ» ամառային ճամբար
Անցկացման ժամանակահատված՝ 2014թ. օգոստոս
Անցկացման վայր՝ Ջավախք, Նինոծմինդայի շրջան, գյուղ Գանձա

Հակիրճ նկարագիր՝
ՋԱՀ-ի աջակցությամբ Նինոծմինդայի Գանձա գյուղում կազմակերպվել է «Վերադարձ» խորագրով ամառային ճամբար-ծրագիրը, որին մասնակցել են 8-12 տարեկան երեխաներ Գանձայի և Ծալկայի շրջաններից:

Ծրագրի արդյունքներ՝
- **6** օր **20** մասնակից երեխա ստացել էազգային, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակություն, որն էլ նպաստել է նրանց մտածելակերպի և արժե համակարգի ձևավորմանը:

Ծրագրի անվանումը՝ **«Երկիր Զաբախա» ռադիոհաղորդումների շարք**
Ժամանակահատվածը՝ 2014-2016 թթ.
Վայրը՝ ՀՀ, Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2014 թ. հունիսի 16-ից սկսած Լրատվական ռադիոյի հետ համատեղ FM 106.5 ռադիոյի եթերում հեռարձակվել է «Երկիր Զաբախա» հաղորդաշարը (յուրաքանչյուր հաղորդման տևողությունը՝ 30 րոպե), որի յուրաքանչյուր հաղորդում նվիրված է Ջավախքի մեծերից մեկի կյանքի և գործունեության լուսաբանմանը:

Ծրագրի արդյունքներ՝

- Թողարկած ավելի քան **60** ռադիոհաղորդում, որոնք հասանելի են ինչպես ՋԱՀ-ի և Լրատվական ռադիոյի պաշտոնական կայքէջում, այնպես էլ YouTube-ում:
- Շուրջ **5.000** ռադիոունկնդիր Հայաստանից, Վրաստանից, Ռուսաստանից և այլ երկրներից բացահայտում է մեծանուն ջավախքցիներին, ծանոթանում նրանց կյանքին և գործունեությանը, զուգահեռաբար տեղեկանում Ջավախքի անցյալի ու ներկա խնդիրների մասին:

Ծրագրի անվանումը՝ **«Հանուն խաղաղ հարևանության» գրաֆիտիի փառատոն Ջավախքում**

Ժամանակահատվածը՝ 2015 թ. սեպտեմբեր

Վայրը՝ Ջավախք, ք. Ախալքալաք, ք. Նինոծմինդա

Հակիրճ նկարագիր՝

Հետամուտ լինելով նպաստել Հայաստանի և Վրաստանի երիտասարդների միջև փորձի փոխանակմանը, Ջավախքի հոգևոր-մշակութային կյանքի, ինչպես նաև հայ-վրացական երիտասարդական համագործակցության բարելավմանը՝ «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը Ախալքալաքի «Բաց սահմաններ» ՀԿ-ի, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության, ԵՀԽ հայաստանյան Կլոր սեղան հիմնադրամի և «Արմսվիսբանկ» (հայ-շվեյցարական բանկ) ՓԲԸ-ի հետ համակողմանի գործընկերությամբ Ջավախքի Ախալքալաք և Նինոծմինդա քաղաքներում իրականացրել է «Հանուն խաղաղ հարևանության» գրաֆիտիի փառատոնը:

Ծրագրի արդյունքներ՝

- Շուրջ **100** մասնակից, **20** նկարիչ-մասնագետ Հայաստանից և Վրաստանից,
- **10**-օրյա փառատոնի ընթացքում **10** գրաֆիկական պատկեր Ջավախքի **2** քաղաքում,
- Քաղաքների արտաքին տեսքի բարելավում հայ և վրացի մեծանուն արվեստագետների, պոետների, գործիչների դիմանկարներով, խաղաղության և բարեկամության խորհրդանշերով ու պատկերներով:

Ծրագրի անվանումը՝ **Աջակցություն երիտասարդական մշակութային կենտրոնին**
Ժամանակահատվածը՝ 2014թ. սեպտեմբեր
Վայրը՝ Ջավախք, Նինոծմինդա

Հակիրճ նկարագիր՝ Ջավախքի Նինոծմինդա քաղաքում տեղի ունեցավ Հայ օգնության միության նախաձեռնությամբ հիմնադրված Երիտասարդական-մշակութային կենտրոնի բացումը, որին իր մասնակցությունն ունեցավ նաև ՋԱՀ-ը՝ ցուցաբերելով տեխնիկական աջակցություն:

Ծրագրի արդյունքներ՝
- Տեխնիկապես հագեցած մշակութային կենտրոնի առկայություն:

Ծրագրի անվանումը՝ Գաթայի փառատոն. ուխտագնացություն դեպի Ջավախք
Ժամանակահատվածը՝ 2017թ. մարտ
Վայրը՝ Վրաստան, Ջավախք, ք. Ախալքալաք

Հակիրճ նկարագիր՝ 2017թ. մարտի 22-ին՝ Միջինքի օրը, Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցում նշվեց արդեն ավանդական դարձած գաթայի փառատոնը: Փառատոնին մասնակցելու նպատակով ՋԱՀ-ը Երևանի և Գյումրիի **50** երիտասարդների համար կազմակերպեց ուխտագնացություն դեպի Ջավախք: Փառատոններին և մշակութային միջոցառումներին աջակցություն ցուցաբերելը նպատակ ունի ակտիվացնել Ջավախքի հոգևոր-մշակութային կյանքը, պահպանել ջավախքյան ավանդույթները և ապահովել երիտասարդների միջև շփումը:

Ծրագրի արդյունքներ՝

- **1-ին** անգամ Երևանից և Գյումրիից շուրջ **50** երիտասարդի համար ուխտագնացություն կազմակերպվեց գաթայի փառատոնին,
- Երիտասարդները ծանոթացան Ջավախքի տարբեր շրջանների գաթաների բաղադրատոմսերին,
- Փառատոնի մասնակիցները ներկայացրեցին **5** տասնյակից ավելի գաթայի տեսակներ:

Ծրագրի անվանումը՝ **Աշուղ Ջիվանու տուն-թանգարանի հիմնարկեքի արարողություն**
Ժամանակահատվածը՝ 2015թ.
Վայրը՝ Ջավախք, գ. Կարզախ

Հակիրճ նկարագիր՝ 2015 թ.-ի հուլիսի 25-ին Ջավախքի Կարզախ գյուղում «Ջիվանիական օր» տոնակատարությունների շրջանակներում տեղի է ունեցել Ջիվանու տուն-թանգարանի հիմնարկեքի արարողությունը: Ջավախքի շրջանների ղեկավարության, Հայաստանից և Թիֆլիսից ժամանած մի շարք բարձրաստիճան հյուրերի ներկայությամբ և բարձրաստիճան հոգևորականի օրհնությամբ հիշատակի գրությամբ գլանակ է տեղադրվել պատի մեջ, և այդպիսով հայտարարվել հիմնադրման աշխատանքների մեկնարկը: 2014 թվականին տուն-թանգարանի ստեղծման աշխատանքները համակարգելու նպատակով ձևավորվել էր համապատասխան հանձնաժողով, կազմվել էին տուն-թանգարանի ճարտարապետական և շինարարական նախագծերը:

Ծրագրի արդյունքներ՝
- Ջիվանու թողած ժառանգության վերարժևորում, նորովի և համախմբված ներկայացում,
- Տուն-թանգարանում հայկական մշակութային և գիտակրթական կենտրոնի հիմնում,
- Գյուղական տուրիզմի զարգացում տվյալ տարածաշրջանում:

Ծրագրի անվանումը՝ **Աշուղ Ջիվանու տուն-թանգարանի հիմնման ծրագիր**

Ժամանակահատվածը՝ 2016-2017թթ.

Վայրը՝ Ջավախք, գ. Կարզախ

Հակիրճ նկարագիր՝ Աշուղ Ջիվանու հայրենի Կարզախ գյուղում ՋԱՀ-ի կողմից 2016-2017թթ. հիմնադրվեց մեծանուն աշուղի տուն-թանգարանը:

Տուն-թանգարանի հիմնադրման աշխատանքներն իրականացվեցին 2 փուլով՝

- 2016թ.՝ տուն-թանգարանի վերանորոգում և ցուցասրահի հիմնում,
- 2017թ.՝ Ջիվանու հայրական տան վերականգնում և հուշային հատվածի հիմնում (այստեղ է իր մանկության տարիներն անցկացրել մեծանուն աշուղը):

Ծրագրի արդյունքներ՝

- Հիմնվեց աշուղ Ջիվանու մշակութային ժառանգության պահպանման և ներկայացման հաստատություն,
- Վերարժևորվեց մեծանուն աշուղի կյանքն ու գործունեությունը,
- Վերականգնվեց 19-20դդ. Բարձր Հայքին հատուկ ավանդական բնակարան և ստեղծվեց տարածաշրջանում իր տեսակով եզակի տուն-թանգարան,
- Տուն-թանգարանը նպաստեց Կարզախ գյուղի համայնքային կյանքի աշխուժացմանը և զբոսաշրջիկների հոսքի ապահովմանը,
- Հիմնադրման օրվանից ի վեր տուն-թանգարանը տարեկան ունեցել է շուրջ **3000** այցելու աշխարհի տարբեր անկյուններից:

Ծրագրի անվանումը՝ **Մանկապատանեկան տարաբնույթ միջոցառումների կազմակերպում**
Ժամանակահատվածը՝ 2016-2017թթ.
Վայրը՝ Վրաստան, Ջավախք

Հակիրճ նկարագիր՝ Ջավախքի համայնքային կյանքը ակտիվացնելու, ջավախքցի պատանիներին և փոքրիկներին մշակութային միջոցառումներում ներգրավելու նպատակով ՋԱՀ-ը 2016-2017թթ. Ջավախքի տարբեր շրջաններում կազմակերպեց տարաբնույթ միջոցառումներ, ինչպես նաև մշակութային տարբեր թեմատիկ քննարկումներ:

Ծրագրի արդյունքներ՝

- Տոնական միջոցառումներ անցկացվեցին Ջավախքի տարբեր շրջաններում Երևանից ժամանած խաղավարի և մուլտհերոսների մասնակցությամբ,
- Շուրջ **200** երեխա մասնակցեց ամանորյա տոնական միջոցառմանը և ստացավ ամանորյա նվեր «Սովռանո» ընկերության կողմից,
- Շուրջ **50** երեխա մասնակցեց աշուղ Ջիվանու տուն-թանգարանի բակում կազմակերպված կավճանկարչությանը,
- Կարզախ գյուղի շուրջ **50** երիտասարդ և պատանի ներգրավվեց մշակութային տարբեր թեմատիկ քննարկումների մեջ:



Ծրագրի անվանումը՝ **Աշուղ Ջիվանու 170-ամյակին նվիրված Ջիվանու երգերի լավագույն կատարումների սկավառակի թողարկում**

Ժամանակահատվածը՝ 2016թ. հուլիս

Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ ՀՀ մշակույթի նախարարության և ՋԱՀ-ի ֆինանսական միջոցներով և Հայաստանի հանրային ռադիոյի հետ գործընկերությամբ 1-ին անգամ մեկ սկավառակում ներկայացվեցին Ջիվանու ստեղծագործությունների լավագույն կատարումները:

Ծրագրի արդյունքներ՝

- Թողարկվեց աշուղ Ջիվանու երգերի լավագույն կատարումների շուրջ **1000** սկավառակ և անվճար բաժանվեց ջիվանասերներին,
- Սկավառակի թողարկումը նպաստեց հայ աշուղական արվեստի տարածմանը:

Ծրագրի անվանումը՝ **Ջիվանու տուն-թանգարանի գործունեության կազմակերպում և ինստիտուցիոնալ զարգացում**
Ժամանակահատվածը՝ 2016-2018թթ.
Վայրը՝ Վրաստան, Ջավախք, Ախալքալաքի շրջան, գ. Կարզախ

Հակիրճ նկարագիր՝ 2016-2018թթ. աշուղ Ջիվանու տուն-թանգարանի հիմնադրումից հետո ՋԱՀ-ը մշտապես աջակցում է թանգարանին որպես ինստիտուցիոնալ կառույց իր կայացման ճանապարհին, ինչպես նաև կազմակերպում գիդ-համակարգողի պարբերական վերապատրաստումներ, որի նպատակը թանգարանային ոլորտում աշխատակցի հմտությունների զարգացումը և տուն-թանգարանի գործունեության արդյունավետության բարձրացումն է: ՋԱՀ-ի նախաձեռնությամբ գիդ-համակարգողը հանդիպումներ է ունեցել Երևանի մի շարք թանգարանների աշխատակազմի հետ, ինչպես նաև մասնակցել Թանգարանների միջազգային խորհրդի (ԻԿՕՄ) Հայաստանի ազգային կոմիտեի կողմից կազմակերպված «Թանգարանային ցուցադրություն. նախագծում և դիզայն» խորագրով դասընթաց-վարժանքին:

Ծրագրի արդյունքներ՝

- Ներդրվեցին թանգարանային ցուցադրությունների ներկայացման, ֆոնդերի պահպանության կանոններ և սկզբունքներ,
- Ձեռք բերվեցին նոր գիտելիքներ, բովանդակային և գործնական հմտություններ,
- Հաստատվեցին գործընկերական կապեր Հայաստանի մի շարք թանգարանների հետ:
- Մշտական հիմունքներով շաբաթական 6 օր աշխատանքային գրաֆիկով գործող թանգարան:

Ծրագրի անվանումը՝ **Ընթերցման օլիմպիադա**
Ժամանակահատվածը՝ 2018թ. հունիս
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2018թ. հունիսի 27-ին կայացավ «Անտարես» մեդիա հոլդինգի կողմից արդեն 7-րդ անգամ կազմակերպվող «Ընթերցման օլիմպիադայի» հանրապետական փուլը: ՋԱՀ-ն արդեն 4-րդ տարին է, ինչ աջակցում և խրախուսական մրցանակներ է հանձնում օլիմպիադայի մասնակիցներին:

Ծրագրի արդյունքներ՝

- Մրցույթի **3** մասնակցի հանձնվեց ՋԱՀ-ի կողմից հրատարակված ականավոր գրականագետ Գրիգոր Վանցյանի 3 հատորից բաղկացած ժողովածուն, ջավախքցի աշուղ Թիֆիլու գիրքը, աշուղ Ջիվանու լավագույն կատարումների սկավառակ, Ջիվանու հուշանվեր, ինչպես նաև Ջիվանու տուն-թանգարանի հավաստագիր, որը հնարավորություն է տալիս ընտանիքով և դասարանով անսահմանափակ անվճար այցելել Ախալքալաքի Կարզախ գյուղում գործող աշուղ Ջիվանու տուն-թանգարան մինչև 2019թ. օգոստոս ամիսը,
- Այս մրցանակների հանձնումը նպաստեց աշակերտների շրջանակներում Ջավախքի մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանը և դպրոցահասակ տարիքից երեխաներին Ջավախքի մեծերի հետ ծանոթացման գործընթացին:

Ծրագրի անվանումը՝ **Աջակցություն «Հրաշամանուկ» փառատոնին**
Ժամանակահատվածը՝ 2018թ. հունիս
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2018թ. հունիսի 7-ին Արամ Խաչատրյան համերգասրահում անցկացվեց «Հրաշամանուկ» փառատոնը, որին ֆինանսական աջակցություն ցուցաբերեց նաև «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը (ՋԱՀ) (բարերար Արմեն Ղարսլյան): Փառատոնի նպատակն էր իր շուրջը համախմբել Հայաստանի, Ջավախքի, Արցախի և Սփյուռքի հայ փոքրիկներին և երիտասարդներին, հայտնաբերել տաղանդավոր երեխաներին և նրանց համար ճանապարհ հարթել:

Ծրագրի արդյունքներ՝

- Փառատոնին մասնակցեց ավելի քան **70** ջավախքցի փոքրիկ ու պատանի, որոնք ժամանել էին Նինոծմինդայից, Ախալքալաքից, Ախալցխայից և Ջավախքի այլ բնակավայրերից,
- «Հրաշամանուկ» փառատոնին ջավախքցի մասնակիցները ներկայացան հայկական և վրացական ժողովրդական պարերով, ինչպես նաև հայ ազգագրական և ժողովրդական երգերի կատարումներով՝ ներկաներին փոխանցելով հայրենի Ջավախքի մշակութային ոգին և շունչը:
-

Ծրագրի անվանումը՝ **«Ջիվանական օր» տոնակատարությունը՝ անզուգական հնչյուններով և նոր երանգներով**
Ժամանակահատվածը՝ 2015-2018թթ.
Վայրը՝ Վրաստան, գ. Կարզախ

Հակիրճ նկարագիր՝ Յուրաքանչյուր տարի Վրաստանի Ախալքալաքի շրջանի Կարզախ գյուղում նշվում է Ջիվանական օրը, որը 2015 թվականից ի վեր կազմակերվում է ՋԱՀ-ի, աշուղ Ջիվանու տուն-թանգարանի և Ախալքալաքի տեղական իշխանությունների գործընկերությամբ:
Կարևորելով Ջավախքում զբոսաշրջության զարգացման անհրաժեշտությունը՝ տուն-թանգարանի բակում կազմակերպվում է «Կարզախի բարիքներ» խորագրով գյուղական մթերքների տոնավաճառ: Տեղի է ունենում նաև թեմատիկ հուշանվերների բարեգործական վաճառք, որից գոյացած ողջ հասույթն ուղղվեց տուն-թանգարանի զարգացման ծրագրերին:

Ծրագրի արդյունքներ՝

- Թեմատիկ հուշանվերների բարեգործական վաճառքից գոյացած հասույթը ուղղվում է Ջիվանու տուն-թանգարանին,
- Շուրջ **4000** հոգի անվճար այցելում է Ջիվանու տուն-թանգարան,
- Ներկայացվում է տուն-թանգարանի և Կարզախ գյուղի զբոսաշրջային ներուժը:

Ծրագրի անվանումը՝ **Հայ-վրացական բարեկամության օր Դամալա գյուղում**

Ժամանակահատվածը՝ 2018թ. օգոստոս

Վայրը՝ Վրաստան, Ասպինձայի շրջան, գ. Դամալա

Հակիրճ նկարագիր՝ 2018թ. օգոստոսի 12-ին Ջավախքի Ասպինձայի շրջանի միակ հայաբնակ Դամալա գյուղում տեղի ունեցավ հայ-վրացական բարեկամության ամրապնդմանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների շարք՝ ի կարևորություն երկու ժողովուրդների միասին անցած հազարամյա ուղու: Կողտաբերդի միջոցառմանը հաջորդեց 19-րդ դարի վերականգնված աղբյուր-հուշարձանի հանդիսավոր բացման արարողությունը գյուղի հոգևոր հովվի օրհնությամբ: Աղբյուրը վերականգնվել է մոսկվայաբնակ գործարար, բարերար Մխիթար Բարսեղյանի միջոցներով:

Ծրագրի արդյունքներ՝

- Վերականգնվեց 19-րդ դարի աղբյուր-հուշարձանը,
- Միջոցառումների շարքը նպաստեց հայ-վրացական բարեկամության ամրապնդմանն ու բարելավմանն ուղղված գործընթացին:

Ծրագրի անվանումը՝ **MusExpo-2018**
Ժամանակահատվածը՝ 2018թթ. նոյեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ Նոյեմբերի 12-14-ը Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ Հայաստան) ցուցահանդեսների սրահում տեղի ունեցավ MUSExpo-2018-ը, որին մասնակցեց Ջիվանու տուն-թանգարանը: Ծրագրի նպատակն էր ստեղծել մի հարթակ, որտեղ զբոսաշրջության և թանգարանային ոլորտների մասնագետները հնարավորություն կունենային քննարկելու թանգարանները զբոսաշրջային երթուղիներում ներառելու հնարավորությունները և ներկայացնելու թանգարանային ներուժը:

Ծրագրի արդյունքներ՝

- Ջիվանու տուն-թանգարանը տուր-օպերատորներին ներկայացրեց թանգարանի, Ջավախքի և մասնավորապես Կարզախի զբոսաշրջային ներուժը,
- Ձևավորվեց համագործակցություն ՀՀ և Արցախի այլ թանգարանների հետ,
- Մասնակցություն հանրային ֆորումին, որտեղ միջազգային փորձագետների օգնությամբ համախմբվեցին թանգարանային, կորպորատիվ, տեղեկատվական տեխնոլոգիաների, կրթական, զբոսաշրջային և այլ ոլորտների համապատասխան մասնագետ-ները ոլորտին առնչվող խնդիրներն ու մարտահրավերները քննարկելու և կառուցվածքային լուծումներ առաջարկելու համար:

Գիտակրթական ծրագրերի իրականացում

Նկատի ունենալով ջավախքցի երիտասարդներին կրթության ավելի բարձր մակարդակով ապահովելու, Ջավախքի հարուստ մշակութային ժառանգությունը և ազգային դիմագիծը պահպանելու անհրաժեշտությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, թե որքան մեծանուն մտավորականներ, արվեստագետներ և գիտնականներ է տվել Ջավախքը հայությանը և աշխարհին՝ ՋԱՀ-ն իր գործունեության մեջ առանցքային տեղ է հատկացնում գիտակրթական ոլորտի զարգացմանը:

*Հաշվետու ժամանակահատվածում ՋԱՀ-ն իրականացրել է շուրջ **20** գիտակրթական ծրագիր:*



Ծրագրի անվանումը՝ **«Ղադո» գրքի տպագրություն**
Ժամանակահատվածը՝ 2015թ., օգոստոս
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ ՋԱՀ-ն իր գործունեության շրջանակներում մեծ տեղ է հատկացնում Ջավախքի և Ջավախքի մեծերի մասին գրքերի տպագրությանը: 2015 թվականի օգոստոսին ՋԱՀ-ը կազմակերպչական, գիտական և խմբագրական հարցերում աջակցել է Վիկտոր Աղալարյանի «Ղադո» գրքի հրատարակությանը:

Ծրագրի արդյունքներ՝

- Գրքում ներկայացված է Ջավախքի Ղադո (Ղադոլար) գյուղի պատմությունն ի սկզբանե մինչև 21-րդ դարի սկիզբը:

Ծրագրի անվանումը՝ **«Ախալցխահայերի ինքնապաշտպանությունը 1917-1918թթ.» գրքի տպագրություն**
Ժամանակահատվածը՝ 2015թ. հոկտեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ Հիմնադրամը խմբագրական աշխատանքներում աջակցել է 2015 թվականի հոկտեմբերին լույս տեսած Լյուբա Մաթևոսյանի «Ախալցխահայերի ինքնապաշտպանությունը 1917-1918թթ.» գրքի հրատարակությանը, ինչպես նաև նպաստել է գրքի վաճառքին:

Ծրագրի արդյունքներ՝

- Գրքում ներկայացված են Ախալցխայի և Ախալքալաքի ինքնապաշտպանական կռիվները, ինչպես նաև վերապրածների հուշերը:

Ծրագրի անվանումը՝ **«ՋԱՎԱԽՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ 1941-1945թթ.» գրքի հրատարակություն**

Ժամանակահատվածը՝ 2014թ. սեպտեմբեր

Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը, «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի ֆինանսական օժանդակությամբ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի խմբագրմամբ, հրատարակել է պ.գ.դ., պրոֆեսոր Կլիմենտ Հարությունյանի հեղինակած «ՋԱՎԱԽՔԱՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ 1941-1945 թթ.» արժեքավոր գիրքը:

Ծրագրի արդյունքներ՝

- ՌԴ պաշտպանության նախարարության կենտրոնական արխիվի նյութերի, համապատասխան գրականության և մամուլի հիման վրա **1-ին անգամ** հայ պատմագիտության մեջ լուսաբանվում է Ջավախքի (հիմնականում՝ Ախալքալաքի շրջանի) հայության 1941-1945 թթ. Հայրենական մեծ պատերազմի մասնակցության հիմնահարցը, պատերազմում Խորհրդային միության հերոսի կոչման արժանացած, Փառքի շքանշանի երեք աստիճաններով պարգևատրված և գեներալի ու ծովակալի կոչման արժանացած ջավախքահայերի կատարած սխրանքները, ինչպես նաև թիկունքի աշխատավորների հերոսական աշխատանքը,
- Հայ ընթերցողին հնարավորություն ընձեռվեց ծանոթանալ Հայրենական մեծ պատերազմին ջավախահայության հերոսական մասնակցությանը:

Ծրագրի անվանումը՝ «ՋԱՎԱԽԵՑԻ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՂԻՆ» գրքույկ
Ժամանակահատվածը՝ 2014թ. դեկտեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ ՋԱՀ-ը հրատարակել է Վահան Տերյանի ավագ եղբայր Ջավախեցու (Ղազարոս Տեր-Գրիգորյան, 1874-1937թթ.) անցած կյանքը և ստեղծագործական ուղին ներկայացնող գրքույկը, որում զետեղված են նրա՝ Ջավախքի գյուղաշխարհին արտացոլող «Ընկնավորը», «Դատաստան կա», «Վերն Աստված կա» պատմվածքները և «Հուշեր Վահան Տերյանի կյանքից» հուշագրությունը:

Ծրագրի արդյունքներ՝

- Հայ ընթերցողին **1-ին անգամ** համապարփակ կերպով ներկայացվեց տերյանական գերդաստանի ևս մեկ ներկայացուցչի անցած կյանքը և ազգանպաստ գործունեությունը:

Ծրագրի անվանումը՝ Գրիգոր Վանցյանի գործերի ժողովածուի տպագրություն
Ժամանակահատվածը՝ 2015թ. հոկտեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի և «Արմեն և Թաթուլ Ղարսլյան եղբայրներ» գրական հիմնադրամի ֆինանսական միջոցներով 2015 թվականի հոկտեմբերին լույս տեսավ Գրիգոր Վանցյանի գործերի ժողովածուի առաջին հատորը, որում ամփոփված են անվանի լեզվաբան, հայագետի (1870-1908 թթ.) տարբեր տարիներին հրատարակած գիտական և հրապարակախոսական բնույթի հոդվածները, գրքերը, նամակները, ինչպես նաև հեղինակի առաջին գիրքը՝ «Հայ հեղինակները»:

Ծրագրի արդյունքներ՝

- Հեղինակի գործերի **1-ին** համահավաք ժողովածուն է:

Ծրագրի անվանումը՝ **«Հայաստան, Հայրենի եզերք, Ջավախք» խորագրով ցուցահանդես**
Ժամանակահատվածը՝ 2016թ. մարտ
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. մարտի 25-ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանում տնօրեն Տիգրան Պետրոսյանցի նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Հայաստան, Հայրենի եզերք, Ջավախք» խորագրով ցուցահանդեսը, որի կազմակերպչական աշխատանքներին աջակցեց ՋԱՀ-ը: Ցուցահանդեսի նպատակը ջավախքցի մեծավաստակ գիտնականներին, գիտության, տնտեսության, արվեստի ու մշակույթի ոլորտի ներկայացուցիչներին հանրահռչակման արժանացնելն էր:

Ծրագրի արդյունքներ՝

- Ցուցադրվեցին Ջավախքին և ջավախքցիներին նվիրված ավելի քան **600** գիտական, գեղարվեստական և հանրամատչելի գրքեր՝ նախախորհրդային, խորհրդային և անկախության տարիների հրատարակությունների շարքից,
- Ցուցադրվեցին մանկավարժական համալսարանի դասախոս, ծնունդով Ջավախքի Ղուշչի գյուղից, անվանի մաթեմատիկոս Համլետ Միքայելյանի ջավախքյան թեմաներով գեղանկարները:

Ծրագրի անվանումը՝ **Գրիգոր Վանցյանի գործերի ժողովածուի 2-րդ և 3-րդ հատորների հրատարակություն**
Ժամանակահատվածը՝ 2016թ.
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ ՋԱՀ-ի (բարերար Սերգեյ Վանցյան) և «Արմեն և Թաթուլ Ղարսլյան եղբայրներ» գրական հիմնադրամի նյութական աջակցությամբ 2016թ. հրատարակվեցին անվանի լեզվաբան, հայագետ Գրիգոր Վանցյանի (1870-1908 թթ.) գործերի ժողովածուի 2-րդ (Երկերի ժողովածու) և 3-րդ (Ուսումնասիրություններ և հրապարակումներ) հատորները:
2-րդ հատորում ամփոփված են անվանի լեզվաբանի «Պատմական քերականութիւն արևելահայ լեզուի» (1906), «Դպրոցական քերականութիւն» (1906), «Գրպանի ուղղագրութիւն» (1914), «Հայոց պատմություն» (պատ-կերազարդ) (1908), «Հայ-լեզու պատկերազարդ այբբենարան» (1907) գրքերը, իսկ 3-րդ հատորում՝ գրախոսություններ, նամակներ, հեռագրեր և այլ ուշագրավ հրապարակումներ:

Ծրագրի արդյունքներ՝

- **2-րդ** հատորը հեղինակի գործերի 1-ին համահավաք ժողովածուն է: Նախատեսված է պատմաբան-ազգագրագետների, լեզվաբանների, ինչպես նաև ընթերցասեր լայն շրջանակների համար,
- **3-րդ** հատորում ներկայացված են Գրիգոր Վանցյանին և Հովհաննես Թումանյանին առնչվող նյութեր, որոնցից Հովի. Թումանյանին ուղղված Գր. Վանցյանի թվով **14** ձեռագիր նամակները հրատարակվում են **1-ին** անգամ:

Ծրագրի անվանումը՝ **Աջակցություն Սուլդա գյուղի դպրոցին**
Ժամանակահատվածը՝ 2016թ. դեկտեմբեր
Վայրը՝ Վրաստան, Ջավախք, Ախալքալաքի շրջան,
գ. Սուլդա

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. դեկտեմբերի 24-ին ՋԱՀ-ի գործադիր վարչության ներկայացուցչությունը այցելեց Ախալքալաքի շրջանի Սուլդա գյուղ, և հիմնադրամի կողմից (բարերար՝ ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ, ծնունդով Սուլդա գյուղից Վաղարշակ Մեյրոյան) գյուղի դպրոցին նվիրաբերեց համակարգչային հավաքածու և տպիչ սարք:

Ծրագրի արդյունքներ՝

- Դպրոցը համալրվեց ժամանակակից տեխնիկայով,
- ՋԱՀ-ի գործադիր վարչությունը ծանոթացավ Սուլդա գյուղի և դպրոցի խնդիրներին, քննարկվեցին առկա խնդիրների լուծման ուղիները և համագործակցության ընդհանուր եզրերը:

Ծրագրի անվանումը՝ **Ընթերցման օլիմպիադա**
Ժամանակահատվածը՝ 2015-2017թթ. մայիս
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ Յուրաքանչյուր տարի «Անտարես» մեդիա հոլդինգի նախաձեռնությամբ Հայաստանի ազգային գրադարանում տեղի է ունենում «Ընթերցման օլիմպիադա», և ՋԱՀ-ն արդեն երեք տարի անընդմեջ հանդես է գալիս որպես օլիմպիադայի գործընկեր և աջակից կազմակերպություն՝ ջավախքյան թեմաներով խրախուսական մրցանակներ հանձնելով հանրապետական փուլի մասնակիցներին:

Ծրագրի արդյունքներ՝

- Հանրության շրջանում բարձրանում է հայկական պատմության և մշակույթի անբաժանելի մասը կազմող Ջավախքի և Ջավախքի մեծերի մասին իրազեկվածության մակարդակը,
- Դեռ մանուկ հասակից երեխաների մոտ բարձրանում է ընթերցանության նկատմամբ հետաքրքրվածությունը:

Ծրագրի անվանումը՝ Սեմինարներ, թրեյնինգներ, դասախոսություններ և ֆիլմերի դիտում-քննարկումներ
Ժամանակահատվածը՝ 2016-2017թթ.
Վայրը՝ Վրաստան, Ջավախք

Հակիրճ նկարագիր՝ Մեծապես կարևորելով ջավախքցի երիտասարդների համար ոչ ֆորմալ կրթության հնարավորություն ստեղծելու անհրաժեշտությունը, ՋԱՀ-ը 2016-2017թթ. թե Հայաստանում, և թե Ջավախքում անցկացրել է տարաբնույթ սեմինարներ, թրեյնինգներ, դասախոսություններ և կազմակերպել ֆիլմերի դիտում-քննարկումներ՝ նվիրված հայ գրականության և մշակույթի ոլորտի ջավախքցի մեծերին, ինչպիսիք են՝ Վահան Տերյանը, Վարդգես Սուրենյանցը, Հակոբ Կոջոյանը և այլք, հատուկ հյուրեր Վիկտոր Հովհաննիսյանի և Գևորգ Էմին-Տերյանի մասնակցությամբ:

Ծրագրի արդյունքներ՝

- Սեմինար-թրեյնինգի շուրջ **15** մասնակից ձեռք բերեց անձնային բարձր հատկանիշների զարգացման մասին գիտելիքներ և ծանոթացավ հաջողության հասնելու ուղիներին,
- Դասախոսությունների շուրջ **70** մասնակից ծանոթացավ Ջավախքի մշակույթի ոլորտի հայ մեծերի գործունեությանը, թողած ժառանգությանը և նրանց ունեցած ավանդին մի շարք ոլորտների զարգացման մեջ,
- Քննարկվեցին հայ գրականության և կերպարվեստի վարպետների ստեղծագործությունները և ինչեցին դրանց մեկնաբանություններին առնչվող հարցեր:

Ծրագրի անվանումը՝ **Գրենական պարագաներ առաջին դասարանցիներին «Մանկության մոլորակ» ծրագրի շրջանակներում**

Ժամանակահատվածը՝ 2018թ. հոկտեմբեր

Վայրը՝ Վրաստան, Ջավախք

Հակիրճ նկարագիր՝ 2018թ. հոկտեմբերի 8-ին Մյունխենի «Անուշ» հայ-գերմանական պարի և մշակույթի կենտրոնի պատվիրակությունը «Ջավախքին աջակցություն» հիմնադրամի աջակցությամբ դպրոցի առաջին քայլի կապակցությամբ գրենական պարագաներ նվիրեց Ջավախքի մի շարք գյուղերի առաջին դասարանցիներին՝ կարևորելով կրթության դերը փոքրիկների կյանքում:
«Մանկության մոլորակ» ծրագիրը շարունակական բնույթ ունի և առաջիկայում ընդգրկելու է բոլոր դպրոցականներին, ընդհուպ մինչև ավարտական դասարանները, քանի որ վերջին զանգով մանկության մոլորակից աշակերտները թևակոխում են կյանքի մի նոր փուլ:

Ծրագրի արդյունքներ՝

- Ջավախքի շուրջ **10** գյուղի ջավախքցի **115** դպրոցական ստացավ գրենական պարագաներ:

Ջավախքցի երիտասարդների դերակատարության կարևորում

Հաշվի առնելով ջավախքցի երիտասարդների դերը Ջավախքի զարգացման ծրագրերում և նրանց առաքելությունը հասարակության մեջ՝ ՋԱՀ-ն իր գործունեության մարտավարության մեջ ուրույն տեղ է հատկացնում երիտասարդների շրջանում մասնագիտական գիտելիքների և հմտությունների զարգացմանը:

*Հաշվետու ժամանակահատվածում ՋԱՀ-ն իրականացրել է **15** երիտասարդական ծրագիր:*

Ծրագրի անվանումը՝ **«Երիտասարդությունը և ջավախահայության հիմնախնդիրները» խորագրով համաժողով**

Ժամանակահատվածը՝ 2015թ. մարտ

Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում ՋԱՀ-ը կազմակերպել է «Երիտասարդությունը և ջավախահայության հիմնախնդիրները» խորագրով համաժողով, որին մասնակցել են մեծաքանակ ջավախահայ երիտասարդներ թե՛ Հայաստանից և թե՛ Ջավախքից: Համաժողովի նպատակն էր հնարավորություն տալ ջավախքցի երիտասարդներին իրենց տեսանկյունից ներկայացելու Ջավախքի արդի խնդիրները, ինչպես նաև ստեղծելու դրանց լուծման մեխանիզմներ:

Ծրագրի արդյունքներ՝

- Աննախադեպ հավաք՝ շուրջ **600** մասնակից,
- Ձևավորված ոլորտային հանձնաժողովներ՝ համալրված **8** համապատասխան մասնագիտական կարողություններ և փորձառություն ունեցող **140**
- անձանցով, որոնք հետևյալ ոլորտներում կարող են հանդես գալ համապատասխան ոլորտային հիմնախնդիրների լուծման առաջարկներով.

- Առողջապահական
- Գիտակրթական
- Սպորտի և երիտասարդության
- Մշակութային
- Իրավական
- Տնտեսական
- Սոցիալական
- SS և ճարտարագիտություն

Ծրագրի անվանումը՝ **«ԲԱՋԵ-2014» համահայկական երիտասարդական հավաք**
Ժամանակահատվածը՝ 2014թ. օգոստոս
Վայրը՝ ՀՀ, Ծաղկաձոր

Հակիրճ նկարագիր՝ Հիմնադրամն աջակցել է 2014թ. օգոստոսի 18-24-ը Ծաղկաձորում կազմակերպված «ԲԱՋԵ-2014» համահայկական երիտասարդական հավաքի Ջավախքի ջոկատին, որի անդամները հնարավորություն են ստացել իրենց ինտելեկտուալ և ֆիզիկական ուժը ներկայացնել Հայաստանի և սփյուռքի այլ երիտասարդների շրջանում, կապեր հաստատել վերջիններիս հետ:

Ծրագրի արդյունքներ՝

- **7** - օրյա միջոցառման շրջանակներում **9** երիտասարդից բաղկացած Ջավախքի ջոկատը հանդես է եկել նարնջագույն ճակատում և հաջողություններ է գրանցել հետևյալ մրցույթներում՝
  - Պարանի ձգում՝ **1-ին** հորիզոնական,
  - Բազկամարտ (Մանասյան Ալեքսան) **2-րդ** հորիզոնական,
  - Լող (Ղարսլյան Անդրանիկ)՝ **4-րդ** հորիզոնական:

Ծրագրի անվանումը՝ Ջավախահայ երիտասարդների այցելություններ արտադրական և այլ ձեռնարկություններ, այդ թվում «Բեկոն» մսամթերքի գործարան
Ժամանակահատվածը՝ 2015թ. մայիս
Վայրը՝ ՀՀ, գ. Արզնի

Հակիրճ նկարագիր՝ Մայիսի 1-ին ՋԱՀ-ի նախաձեռնությամբ հիմնադրամի աշխատանքներում ակտիվ ներգրավված երիտասարդ կամավորներն այցելել են ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ, բարերար Պավլիկ Մարգարյանին պատկանող «Բեկոն» մսամթերքի գործարան: Այցի ընթացքում տվյալ ոլորտի հմուտ և փորձառու մասնագետները երիտասարդներին ներկայացրել են գործարանի հիմնման պատմությունը, գործարանի արտադրական հնարավորությունները, լաբորատոր և սանիտարական նորմերին համապատասխանող նորագույն սարքավորումներն ու տեխնոլոգիաները:

Ծրագրի արդյունքներ՝

- Շուրջ **20** ջավախահայ երիտասարդ ծանոթացավ ջավախահայ գործարարների՝ հայաստանյան շուկայում առաջատար դիրքերում գտնվող արտադրանքին, կազմակերպվեց ապրանքատեսականու համտես,
- Ջավախահայ երիտասարդների համար հիմք դրվեց ճանաչողական այցեր կատարելու մեխանիզմին, փորձի փոխանակմանը:

Ծրագրի անվանումը՝ **Ջավախահայ երիտասարդների այցելություն Շիրակի մարզի պատմամշակութային վայրեր և մարզական միջոցառման**

Ժամանակահատվածը՝ 2015թ. մայիս

Վայրը՝ ՀՀ, Շիրակի մարզ

Հակիրճ նկարագիր՝ ՋԱՀ-ի նախաձեռնությամբ մայիսի 10-ին կազմակերպվել է Երևանում և Ջավախքում բնակվող ջավախահայ երիտասարդների այցը Շիրակի մարզի Մարալիկ քաղաքի կենտրոնական հրապարակում կանգնեցված հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի արձան, Գյումրու Սբ. Յոթ վերք եկեղեցի, Հովհաննես Շիրազի տուն-թանգարան, Մարմաշենի վանական համալիր: Հաջորդիվ երիտասարդները հյուրընկալվել են Շիրակի ֆուտբոլային ակադեմիայում, որտեղ ծանոթացել են Շիրակի մարզի ֆուտբոլային կյանքին, հանդիպել «Շիրակ» ակումբի ներկայացուցիչների հետ, ինչպես նաև դիտել ՀՀ բարձրագույն խմբի առաջնության «Շիրակ» – «Փյունիկ» հանդիպումը: Խաղի ավարտին երիտասարդների քվեարկությամբ առանձնացվել են հանդիպման լավագույն ֆուտբոլիստները, ովքեր ՋԱՀ-ի կողմից արժանացել են ֆինանսական պարգևատրման:

Ծրագրի արդյունքներ՝

- Դեպի Շիրակի մարզ կատարած ճանաչողական շրջայցին մասնակցեց շուրջ **100** ջավախահայ երիտասարդ,
- ՋԱՀ-ի **1-ին շնորհանդեսը** Շիրակի մարզում:

Ծրագրի անվանումը՝ **Ջավախահայության հիմնախնդիրների ներկայացում երիտասարդների շրջանում**
Ժամանակահատվածը՝ 2015 թ. մայիս - օգոստոս
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ Նշանակություն տալով Ջավախքի մասին տեղեկատվության տարածմանը, ինչպես նաև տարածաշրջանում առկա բազմաոլորտ հիմնախնդիրների վերհանմանն ու ներկայացմանը՝ ՋԱՀ-ը պարբերաբար քննարկումներ է կազմակերպել տարբեր շրջանակների համար: Երիտասարդների շրջանակներում ներկայացվել են Ջավախքի պատմությանը, ժողովրդագրությանը, մշակույթին և այլնին վերաբերող խնդիրներ: Ջավախքի բազմաոլորտ հիմնախնդիրները ներկայացվել են տարածաշրջանային զարգացումների համապատկերի վրա: Հիմքեր են դրվել ջավախահայության օժանդակության ծրագրային քարտեզի ստեղծման համար:

Ծրագրի արդյունքներ՝

- Շուրջ **7** հանդիպում-քննարկում,
- Քննարկումներին շուրջ **300** երիտասարդ մասնակիցներ, փորձի, կարծիքների փոխանակում, ջավախահայության շրջանակներում երիտասարդների ծանոթացում:

Ծրագրի անվանումը՝ **Առաջնորդության դասընթաց ջավախահայ երիտասարդների համար**
Ժամանակահատվածը՝ 2015 թ. դեկտեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ Նպատակ ունենալով ջավախահայ երիտասարդների մոտ զարգացնել առաջնորդի ջիղը, խթանել նախաձեռնողականությունն ու աշխատասիրությունը՝ դեկտեմբերի 5-13-ը ՋԱՀ-ը Սփյուռքահայ ուսանողների խորհրդի, «Հարմոնիա» հոգեբանության հանրային զարգացման կենտրոնի, Համաշխարհային հայկական կոնգրեսի երիտասարդական կազմակերպությունների ասոցիացիայի և Երիտասարդ առաջնորդների դպրոցի հետ համագործակցությամբ ջավախահայ երիտասարդների համար կազմակերպել է առաջնորդության դասընթացներ հետևյալ թեմաներով.

- Առաջնորդի 5 մակարդակները,
- Անձնային աճ,
- Բանակցություններ վարելու հմտություններ,
- Կառավարում,
- Հաղորդակցման հմտություններ,
- Էլեկտրոնային մարքեթինգ:

Ծրագրի արդյունքներ՝

- Շուրջ **25** մասնակից,
- Նոր գիտելիքներ, ծանոթություններ, փորձի փոխանակում:



Ծրագրի անվանումը՝ **Առաջնորդության դասընթաց ջավախքցի երիտասարդների համար**
Ժամանակահատվածը՝ 2016թ. դեկտեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. դեկտեմբերի 3-ին «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոնում ՋԱՀ-ի երիտասարդական հանձնաժողովի նախաձեռնությամբ, Սփյուռքահայ ուսանողների խորհրդի և «Հարմոնիա» հոգեբանության հանրային զարգացման կենտրոնի հետ գործընկերությամբ մեկնարկեց ջավախքցի երիտասարդների համար Առաջնորդության 2-րդ դասընթացը, որն ուղղված էր երիտասարդների ինքնազարգացմանն ու սեփական
«ես»-ի կատարելագործմանը:

Ծրագրի արդյունքներ՝

- Շուրջ **40** ջավախքցի երիտասարդներ ծանոթացան Ջավախքի զարգացման ծրագրերին,
- Դասընթացի մասնակիցները տեսական գիտելիքներ և գործնական հմտություններ ձեռք բերեցին առաջնորդական հատկանիշների զարգացման, ինքնավստահության մակարդակի բարձրացման, անձնային աճի, կյանքում մոտիվացված լինելու և նախաձեռնողականություն ցուցաբերելու վերաբերյալ:

Ծրագրի անվանումը՝ **Կամավորների ընդունելություն ՋԱՀ-ում Երիտասարդների և ուսանողների միջազգային օրվա առթիվ**
Ժամանակահատվածը՝ 2016թ. նոյեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. նոյեմբերի 17-ին «Էլիտ պլազա» բիզնես կենտրոնում Ուսանողների միջազգային օրվա առթիվ ՋԱՀ-ի երիտասարդական հանձնաժողովի կողմից կազմակերպվել էր ՋԱՀ-ի կամավորների ընդունելություն: Միջոցառմանը հրավիրված էին հիմնադրամի համակիրներ, աջակիցներ, գործընկերներ, այդ թվում նաև Հայաստանի բազկամարտի երիտասարդական ասոցիացիայի նախագահ, ծնունդով Ջավախքի Ղուլալիս գյուղից Արտավազդ Նալբանդյանը, բազկամարտի Եվրոպայի և աշխարհի չեմպիոն, ծնունդով Խաչգյուղից Վահան Տեր-Բալյանը, Հայաստանի ուժային եռամարտի ֆեդերացիայի նախագահ Գագիկ Սարոյանը և ուժային եռամարտի Եվրոպայի կրկնակի չեմպիոն, ծնունդով Վաչիան գյուղից Արարատ Շահինյանը:

Ծրագրի արդյունքներ՝

- ՋԱՀ-ի 15 կամավոր ստացավ շնորհակալագիր հիմնադրամի գործու-նեությանն օժանդակելու և աշխատանքներում արդյունավետ մասնակցություն ունենալու համար,
- Շնորհակալագրեր հանձնվեցին նաև մարզիկներին երկրի սահմաններից դուրս Հայաստանի և Ջավախքի պատիվը բարձր պահելու, իսկ երկրի ներսում՝ երիտասարդների շրջանում ֆիզիկական կրթության զարգացման գործում ներդրում ունենալու և ոգևորող օրինակ ծառայելու համար:

Ծրագրի անվանումը՝ **Ջավախքցի պատանիները ՀԲԸՄ-Անդրանիկ սկաուտական բանակում - Հայաստան ծրագրում**
Ժամանակահատվածը՝ 2017թ. հուլիս
Վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ

Հակիրճ նկարագիր՝ 2017թ. հուլիսի 16-ին Լոռու մարզի Լերմոնտովո հովտում գտնվող ՀԲԸՄ ճամբարում մեկնարկեց Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստան «Անդրանիկ» սկաուտական բանակում ծրագիրը, որին ՋԱՀ-ի նախաձեռնությամբ մասնակցեցին նաև պատանիներ Ջավախքի տարբեր շրջաններից՝ Ախալքալաքից, Ախալցխայից, Նինոծմինդայից, Ծալկայից, Ասպինձայից: Նմանատիպ ծրագրերի մեջ ջավախքցի պատանիներին ընդգրկելը նպատակ ունի ապահովել վերջիններիս շփումը հայրենակիցների հետ և ամրապնդել հայրենիքի հետ կապը:

Ծրագրի արդյունքներ՝

- Ջավախքցի **15** պատանի Ջավախքի տարբեր շրջաններից մասնակցեց **14** օր տևողությամբ ծրագրին,
- Ջավախքցի պատանիները ծանոթացան Հայաստանի տեսարժան վայրերին և պատմական հուշարձաններին:

Ծրագրի անվանումը՝ **Ջավախքցի երիտասարդները հոգևոր և ազգային միջոցառումներում**
Ժամանակահատվածը՝ 2017թ.
Վայրը՝ ՀՀ

Հակիրճ նկարագիր՝ Նկատի ունենալով ջավախքցի երիտասարդների շրջանում հոգևոր և ազգային արժեքների նկատմամբ խորը ակնածանք ձևավորելու կարևորությունը և տարաբնույթ միջոցառումներում ընդգրկելու անհրաժեշտությունը՝ ՋԱՀ-ը կազմակերպում և աջակցում է այնպիսի միջոցառումների անցկացմանը, որոնք ջավախքցի երիտասարդներին հնարավորություն կտան ծանոթանալ իրենց ազգային արժեքներին և կապահովեն աշխարհի տարբեր վայրերից ժամանած հայրենակից երիտասարդների հետ շփումը:

Ծրագրի արդյունքներ՝

- Շուրջ **50** ջավախքցի երիտասարդ մասնակցեց ՀՀ պետական խորհրդանիշների տոնին,
- Ապահովվեց ջավախքցի երիտասարդների և հայաբնակ տարբեր վայրերից ժամանած հայրենակից երիտասարդների միջև շփում,
- ՋԱՀ-ի **5** կամավոր թարգմանիչ այցելեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, երիտասարդ թարգմանիչները ծանոթացան եկեղեցական եզրույթների անգլերեն ճիշտ համարժեքներին:

Սոցիալ-տնտեսական կյանքի բարելավում

Նկատի ունենալով հասարակության խոցելի խմբերի խնդիրները, դրանց լուծման հրատապությունը և աջակցության տրամադրման անհրաժեշտությունը՝ ՋԱՀ-ն իր գործունեության մեջ առանձնակի տեղ է հատկացնում բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի իրականացմանը այլ հիմնադրամների և կառույցների հետ համագործակցությամբ, մարդասիրական նախաձեռնություններին, գաղափարներին:

*Հաշվետու ժամանակահատվածում ՋԱՀ-ն իրականացրել է **5** սոցիալ-տնտեսական ծրագիր:*

Ծրագրի անվանումը՝ **Աջակցություն Ջավախքի բազմազավակ ընտանիքներին**
Ժամանակահատվածը՝ 2014-2015 թթ.
Վայրը՝ Սամցխե-Ջավախք և Քվեմո Քարթլի նահանգներ

Հակիրճ նկարագիր՝ Նպատակ ունենալով նպաստել ջավախահայության շրջանում ծնելիության աճին, դրանով իսկ ստեղծելով դրական տենդենցներ ժողովրդագրության բնագավառում՝ ՋԱՀ-ը ձեռնամուխ է եղել «Պարգևավճար Ջավախքի բազմազավակ ընտանիքներին» սոցիալական ծրագրի իրականացմանը, որի շրջանակներում Սամցխե-Ջավախքի և Քվեմո Քարթլիի նահանգներում դրամական պարգև է հատկացվել 2014թ. հունվարի 1-ից հետո ընտանիքներում ծնվող յուրաքանչյուր 3-րդ և հաջորդ երեխաներին (յուրաքանչյուր ընտանիքի 3-րդ երեխայի համար հատկացվում էր 1000 լարի, 4-րդի համար՝ 1500 լարի, 5-րդ ու հաջորդ յուրաքանչյուր երեխայի համար՝ 2000 լարի), ինչպես նաև 2014թ. հունվարի 1-ի դրությամբ անչափահաս, 6 և ավելի երեխա ունեցող յուրաքանչյուր ընտանիքի տրամադրվում էր 2000 լարի:

Ծրագրի արդյունքներ՝

- **320** ընտանիք ծրագրի շրջանակներում ստացել է միանվագ դրամային պարգևավճար,
- Ընդհանուր տրված պարգևավճարի չափը՝ **275.500 լարի** (շուրջ **60.610.000** ՀՀ դրամ):

Ծրագրի անվանումը՝ **Փոխադարձ այց և փորձի փոխանակում Գեղարքունիքի մարզի և Ջավախքի կարտոֆիլագործների միջև**
Ժամանակահատվածը՝ 2016-2017թթ.
Վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ և Վրաստան, Ջավախք

Հակիրճ նկարագիր՝ 2016-2017թթ. ՋԱՀ-ը «Վորլդ Վիժն Հայաստան» (World Vision Armenia) կազմակերպության գործընկերությամբ փոխադարձ հանդիպումներ կազմակերպեց Ջավախքի և Գեղարքունիքի մարզի կարտոֆիլագործ ֆերմերների միջև: 2016թ. Գեղարքունիքի մարզի կարտոֆիլագործներն այցելեցին Ախալքալաք, որտեղ հանդիպում ունեցան տեղի կարտոֆիլա-գործների հետ, իսկ 2017թ. ՋԱՀ-ն ապահովեց ջավախքցի կարտոֆիլագործների մասնակցությունը Գավառում անցկացվող «Մեծ Փուռ» փառատոնին: Նմանատիպ այցելությունների և հանդիպումների նպատակը կարտոֆիլագործության փորձի և հմտությունների փոխանակումն է և տարբեր տարածաշրջան-ների կարտոֆիլագործների միջև շփման ապահովումը:

Ծրագրի արդյունքներ՝

- Շուրջ 15 կարտոֆիլագործ Գեղարքունիքի մարզից այցելեց «Ախալքալաքի կարտոֆիլ» բրենդի ներքո գործող կազմակերպություն,
- Ֆերմերները փոխադարձ ծանոթացան կարտոֆիլի մշակման տեխնոլոգիաներին և առանձնահատկություններին,
- Ուրվագծվեցին շարունակական համագործակցության և հեռանկարային ծրագրեր:

Ծրագրի անվանումը՝ **ՀՀ մի խումբ մտավորականների այցելությունը Արցախ**

Ժամանակահատվածը՝ 2016թ.

Վայրը՝ Արցախի հանրապետություն

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. մայիսի 28-29-ին Արցախի և առաջնագծում կանգնած զինվորներին զորակցելու նպատակով ՀՀ գիտության և մշակույթի ոլորտի ներկայացուցիչներից կազմված մտավորականների խումբն այցելեց Արցախ և առաջնագիծ: Այցելությունն իրականացվել է ՋԱՀ-ի և գրող-հրապարակախոս Մերուժան Տեր-Գուլանյանի կազմակերպական և ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի նախագահ, բարերար Սոս Սահակյանի նյութական աջակցությամբ:

Ծրագրի արդյունքներ՝

- Մտավորականներն այցելեցին առաջնագծի տարբեր հատվածներ և հանդիպեցին զինվորների ու սպայական կազմի հետ,
- Զինվորականներին հանձնվեցին պատմագիտական, ազգագրական, գրական-գեղարվեստական ու գիտահետազոտական բնույթի տարբեր գրքեր, հանդեսներ, թերթեր և քաղցրավենիք,
- Այցը ամփոփվեց Արցախի նախագահի նստավայրում՝ նախագահ Բակո Սահակյանի գլխավորությամբ:



Բարեգործական միջոցառումների անցկացում

«Ջավախքին աջակցություն» հիմնադրամի նպատակների իրականացման համար ՋԱՀ-ը ձեռնամուխ է եղել բարեգործական ճաշկերույթների, հավաքների և շնորհանդես-դրամահավաքների կազմակերպմանը:

*Հաշվետու ժամանակահատվածում ՋԱՀ-ը կազմակերպել է **2** բարեգործական միջոցառում, **10** շնորհանդես, **5** հավաք:*

Ծրագրի անվանումը՝ **Հաշվետու հավաքների անցկացում**
Ժամանակահատվածը՝ 2015 թ. նոյեմբեր-դեկտեմբեր
Վայրը՝ Հայաստան (Երևան) և
Ռուսաստան (Սանկտ Պետերբուրգ)

Հակիրճ նկարագիր՝ Նոյեմբերի 14-ին Երևանի «Էլիտ Պլազա» բիզնես - կենտրոնում, ինչպես նաև դեկտեմբերի 13-ին Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի շենքում տեղի ունեցան ՋԱՀ-ի հաշվետու հավաքները: Միջոցառմանը ցուցադրվեցին ՋԱՀ-ի 2014 թվականի գործունեության վերաբերյալ կարճամետրաժ ֆիլմը, ընթացիկ, իրականացված և գալիք ծրագրերը: Երևանում ՋԱՀ-ի հետ համատեղ ծրագրերը ներկայացրին նաև գործընկեր կազմակերպությունների՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության, «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի և «Գարդման տուր» զբոսաշրջության ընկերության ներկայացուցիչները:

Ծրագրի արդյունքներ՝

- Անհատական ֆինանսական հաշվետվությունների ներկայացում նվիրատուներին,
- 2014թ. իրականացված ծրագրերի հաշվետվության և այլ տեղեկատվական նյութերի տրամադրում, մասնակիցներին:
- Նվիրատուների մշտական աջակցություն:

Ծրագրի անվանումը՝ **Շնորհանդեսներ-դրամահավաքներ**
Ժամանակահատվածը՝ 2014-2015 թթ.
Վայրը՝ Հայաստան (Երևան, Գյումրի), Վրաստան (Ախալքալաք, Ասպինձա, Դամալա, Նինոծմինդա), Ռուսաստան (Սանկտ Պետերբուրգ, Պերմի երկրամաս, Կրասնոդար), ԱՄՆ (Լոս Անջելես)

Հակիրճ նկարագիր՝ 2014-2015թթ. ընթացքում տարբեր տարածաշրջաններում տեղի ունեցած շնորհանդեսների շրջանակներում ՋԱՀ-ը հյուրերին ներկայացրել է հիմնադրամի գործունեությունը, ջավախքյան խնդիրները, դրանց լուծման համար կատարված ընթացիկ և գալիք ծրագրերը, տեղի են ունեցել քննարկումներ, բարեգործական երեկոներ:

Ծրագրի արդյունքներ՝

- **10** շնորհանդես Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում և ԱՄՆ-ում
- **5.000** և ավել համակիր ամբողջ աշխարհում
- **215** նվիրատու

Ծրագրի անվանումը՝ **Բարեգործական ճաշկերույթ՝ նվիրված Ջիվանու 170-ամյակին**
Ժամանակահատվածը՝ 2016թ. հունիս
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. հունիսի 8-ին «Ռենեսանս» ռեստորանային համալիրում տեղի ունեցավ Ջիվանու 170-ամյակին նվիրված բարեգործական ճաշկերույթ, որից գոյացած ողջ հասույթն ուղղվել է Կարզախում Ջիվանու տուն-թանգարանի հիմնման ծրագրին: Երեկույթում հանդես եկան հանրապետության ճանաչված կատարողներ և խմբեր՝ ՀՀ վաստակավոր արտիստ, պրոֆեսոր Թովմաս Պողոսյանը, «Կարին» ավանդական երգի-պարի խումբը (գեղ. ղեկեկավար՝ Գագիկ Գինոսյան), ասմունքող Ջիվան Սարգսյանը, երիտասարդ և տաղանդավոր երգիչներ Մավր Մկրտչյանը, Կարինե Մուսիկյանը, Նարեկ Պողոսյանը և այլք:

Ծրագրի արդյունքներ՝

- Ճաշկերույթին մասնակցեց շուրջ **300** հյուր՝ հասարակական, մշակութային, պետական գործիչներ, գործարար-բարերարներ, բուհերի ղեկավարներ, ականավոր գիտնականներ,
- Միջոցառումից ստացված ողջ հասույթը կազմեց շուրջ **9.500.000** ՀՀ դրամ, որն ամբողջովին ուղղվեց Ջիվանու տուն-թանգարանի հիմնադրման ծրագրի իրականացմանը:

Ծրագրի անվանումը՝ **Բարեգործական համերգ հանուն քաղցկեղով հիվանդ երեխաների**
Ժամանակահատվածը՝ 2016թ. սեպտեմբեր
Վայրը՝ ՀՀ, ք. Երևան

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. սեպտեմբերի 7-ին ՋԱՀ-ի նախաձեռնությամբ և «Ֆոնդ-100» հիմնադրամի հետ գործընկերությամբ Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի ունեցավ բարեգործական համերգ՝ հանուն քաղցկեղով հիվանդ երեխաների բուժման: Համերգի ընթացքում հնչեցին Վ. Վիսոցկու երգերն ու հեղինակային ստեղծագործությունները Սերգեյ Աղաբաբյանի կատարմամբ, ով Վիսոցկու երգերի լավագույն կատարողներից մեկն է և ապրելով ու ստեղծագործելով Սան Ֆրանցիսկոյում, հաճախ է հանդես գալիս բարեգործական նախաձեռնություններով:

Ծրագրի արդյունքներ՝

- Բարեգործական համերգին մասնակցեց ավելի քան **200** հանդիսատես, այդ թվում ներկայացուցիչներ աջակից կազմակերպություններից, Հայաստանում Ռուսաստանի դեսպանատնից, գործընկեր հիմնադրամի՝ «Ֆոնդ 100»-ից,
- Համերգից ստացված ողջ հասույթը կազմեց **591.000** դրամ, որը «Ֆոնդ 100»-ի միջոցով փոխանցվեց Միլենա Ղուկասյանին, Մարիետա Բազիկյանին և Ս.Ա.-ին (ծնողների խնդրանքով անունը չենք հրապարակում):

Ծրագրի անվանումը՝ **Սպորտը՝ հանուն բարեգործության. սպորտային-բարեգործական առաջնություն**
Ժամանակահատվածը՝ 2016թ. հուլիս
Վայրը՝ ՀՀ, Աղվերան

Հակիրճ նկարագիր՝ 2016թ. հուլիսի 2-ին «Բեսթ Վեսթերն Աղվերան» հյուրանոցում ՋԱՀ-ի հոգաբարձուների խորհրդի անդամ, գործարար և բարերար, «Էլիտ Գրուպ» ՓԲԸ նախագահ Արմեն Մկոյանի նախաձեռնությամբ և բլոտի ակումբի հետ համագործակցությամբ տեղի ունեցավ բլոտի սպորտային-բարեգործական առաջնություն: Հանդիպումը կազմակերպվել էր Ջիվանու տուն-թանգարանի հիմնման ծրագրի շրջանակներում, և բարեգործական միջոցառումից ստացված ողջ հասույթն ուղղվեց տուն-թանգարանի կառուցման աշխատանքների ավարտական փուլին:

Ծրագրի արդյունքներ՝

- Միջոցառումից ստացված ողջ հասույթը կազմեց **1.400.000** ՀՀ դրամ,
- Առաջնության մասնակիցներին հանձնվեցին Ջիվանու պատկերով հուշանվերներ, առաջին երեք տեղերը զբաղեցնողներին՝ մեդալներ և պարգևներ, իսկ հաղթող զույգին՝ գավաթ:



Սպորտ

ՋԱՀ-ը, նպատակ ունենալով նպաստել առողջ ապրելակերպի տարածմանը և սպորտային կյանքի ակտիվացմանը, աջակցել է սպորտային մրցաշարերի, օլիմպիադաների և այլ մարզական միջոցառումների իրականացմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ՋԱՀ-ը կազմակերպել է ***5*** *սպորտային միջոցառում:*

Ծրագրի անվանումը՝ **Ըմբշամարտի առաջնություն**
Ժամանակահատվածը՝ 2014թ. ապրիլ
Վայրը՝ գ. Նորշեն, Ախալցխայի շրջան, Ջավախք

Հակիրճ նկարագիր՝ Սբ. Զատկի տոնակատարություններին զուգահեռ Ախալցխայի Նորշեն-Ծղալթբիլա գյուղում հարակից գյուղերի մասնակցությամբ կազմակերպվեց ըմբշամարտի առաջնություն:
ՋԱՀ-ի նախաձեռնությամբ այս առիթով գյուղ ժամանեց Հայաստանի հանրային հեռուստատեսության նկարահանող խումբը, որը նշյալ տոնակատարությունների, տեղաբնակ հայերի նիստուկացի, գյուղի առօրյայի և առկա խնդիրների մասին պատրաստեց ծավալուն ռեպորտաժ:

Ծրագրի արդյունքներ՝

- Ջավախքի, Սբ. Զատիկի տոնակատարության, ըմբշամարտի և զուգահեռ ընթացող միջոցառումների, տարածաշրջանում առկա խնդիրների, Ախալցխայի և Նորշենի մասին **4** րոպե տևողությամբ վիդեոռեպորտաժի պատրաստում, հեռարձակում շուրջ **10** զանգվածային լրատվական և այլ տեղեկատվական աղբյուրներով,
- Ջավախքում նմանօրինակ միջոցառումների անցկացման խրախուսում:

Ծրագրի անվանումը՝ **Աջակցություն Ախալցխայի հայկական երիտասարդական կրթամշակութային կենտրոնի սպորտդահլիճի վերանորոգմանը**

Ժամանակահատվածը՝ 2014-2015թթ.

Վայրը՝ ք. Ախալցխա, Ջավախք

Հակիրճ նկարագիր՝ Կարևորելով Ջավախքում մշակութային հաստատությունների առկայությունը՝ ինչպես 2014 թ.-ին, այնպես էլ 2015 թ.-ին հիմնադրամը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել Ախալցխայի հայկական երիտասարդական կրթամշակութային կենտրոնի սպորտդահլիճի վերանորգման աշխատանքներին:

Ծրագրի արդյունքներ՝

- Սպորտդահլիճը կնպաստի Ախալցխայի երիտասարդության սպորտային կյանքի ակտիվացմանը: Պատանիները հնարավորություն կունենան զարգացնել իրենց կարողությունները, հմտությունները, վարել ակտիվ երիտասարդական և մշակութային կյանք:

Ծրագրի անվանումը՝ **Աջակցություն Համահայկական օլիմպիադայի Ախալցխայի թիմին**
Ժամանակահատվածը՝ 2015թ. օգոստոս
Վայրը՝ ՀՀ, Երևան

Հակիրճ նկարագիր՝ Կարևորելով ջավախահայ երիտասարդների ինքնաբացահայտման և ինքնադրսևորման նոր հարթակների ստեղծումը՝ ՋԱՀ-ը խթանել և խրախուսել է ջավախքցի երիտասարդների մասնակցությունը տարբեր միջոցառումներին: Այդ իսկ նպատակով, արձագանքելով օգոստոսի 2-13-ը Հայաստանում անցկացված Համահայկական 6-րդ օլիմպիական խաղերի Ախալցխայի թիմի խնդրանքին՝ ԵՊԲՀ-ի հետ համագործակցությամբ ՋԱՀ-ն ապահովել է թիմի անդամների կեցության հարցը:

Ծրագրի արդյունքներ՝

- Ախալցխայի թիմը, գրանցելով հրաշալի արդյունքներ, տուն է վերադարձել **5** ոսկի, **2** արծաթ և **5** բրոնզե մեդալներով:

«Ջավախք-2020»
ռազմավարական-ծրագրային փաթեթ

Վրաստանի Սամցխե-Ջավախք և Քվեմո Քարթլի նահանգների հայության հասարակական կյանքի որակի բարելավման նպատակով «Ջավախքին աջակցություն» հիմնադրամը նախաձեռնել է «Ջավախք-2020» ռազմավարական ծրագրային փաթեթի մշակումը, որը քննարկվել է ՀՀ և Վրաստանի տարբեր ոլորտների ներկայացուցիչների հետ: Ստորև ներկայացված են փաթեթում ընդգրկված ուղղությունները.

ՏՏ ոլորտի զարգացում.

- Արմաթ ինժեներական լաբորատորիաների հիմնում,
- Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում,
- Ծրագրավորողների պատրաստման դասընթացներ:

Սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավում.

- Էկոտուրիզմի զարգացում,
- Գյուղատնտեսության զարգացում:

Կրթության որակի բարձրացում.

- Բուհական առցանց կրթության հնարավորության ստեղծում,
- Լավագույն բուհերի հասանելիության ապահովում,
- Կրթաթոշակների տրամադրում,
- Դասընթացների և սեմինարների անցկացում:

Մշակութային կյանքի ակտիվացում.

- Մշակութային հաստատությունների և կենտրոնների հիմնում,
- Մշակութային միջոցառումների կազմակերպում:

Հայալեզու լրատվության ապահովում.

- Հայալեզու լրատվության ապահովում ռադիոյի և մամուլի միջոցով:

Իրավական-սոցիալական աջակցություն.

- Իրավական և խորհրդատվական ծրագրերի իրականացում

Առողջ ապրելակերպի տարածում և մարզական կյանքի ակտիվացում.

- Սպորտային կյանքի ակտիվացում,
- Աջակցություն ֆուտբոլի զարգացմանը:

Եղի՛ր հայրենիքիդ կողքին
Այստեղ քեզ սպասում են...

Դու էլ կարող ես քո ներդրումն ունենալ Ջավախքի զարգացման և ամրացման գործում՝ կատարելով նվիրատվություն հետևյալ վավերապայմաններով՝

Փոխանցումներ ՀՀ-ից և Արցախի Հանրապետությունից

Բանկը՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ

Հաշվարկային հաշիվները՝

ՀՀ դրամ՝ 2050022378941001

ԱՄՆ դոլար՝ 2050022378941020

Եվրո՝ 2050022378941040

ՌԴ ռուբլի՝ 2050022378941041

Վրաց. լարի՝ 2050022378941042

Российская Федерация /руб/ Ռուսական ռուբլի

Банк Получателя:
СБЕРБАНК РФ
МОСКВА, РОССИЯ
БИК: 044525225
К/СЧ: 30101810400000000225

Получатель:
АОЗТ ИНЕКОБАНК
ЕРЕВАН, АРМЕНИЯ
ИНН: 7702070139
Р/СЧЕТ: 30111810900000000384

ДЛЯ ЗАЧИСЛЕНИЯ НА СЧЕТ:
2050022378941041
НАИМЕНОВАНИЕ ПОЛУЧАТЕЛЯ:
SUPPORT TO JAVAKHK FUND

Georgia /gel/ – վրացական լարի

INTERMEDIARY BANK:
BANK OF GEORGIA,
TBILISI, GEORGIA
SWIFT CODE: BAGAGE22

BENEFICIARY'S BANK:
ACCOUNT:
GE88BG0000000817111900GEL
CJSC INECOBANK,
YEREVAN, ARMENIA
SWIFT CODE: INJSAM 22

Beneficiary account:
2050022378941042
Beneficiary name:
SUPPORT TO JAVAKHK FUND

USD – United States Dollar
ԱՄՆ դոլար

INTERMEDIARY BANK:
DEUTSCHE BANK TRUST COMPANY AMERICAS
NEW YORK, USA
SWIFT CODE: BKTRUS33
Fed Wire: 021001033

BENEFICIARY'S BANK:
CJSC INECOBANK
YEREVAN, ARMENIA
SWIFT CODE: INJSAM22

Beneficiary account:
2050022378941020

Beneficiary name:
SUPPORT TO JAVAKHK FUND

EUR – EURO – ԵՎՐՈ

INTERMEDIARY BANK:
DEUTSCHE BANK AG
FRANKFURT, GERMANY
SWIFT CODE: DEUTDEFF

BENEFICIARY'S BANK:
CJSC INECOBANK
YEREVAN, ARMENIA
SWIFT CODE: INJSAM22

Beneficiary account:
20500 22378941040

Beneficiary name:
SUPPORT TO JAVAKHK FUND